**Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր  N 2**
**N ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Հ-23-1**
**ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

**ք. Երևան** **«________» _________ 2026թ.**

ՀՀ ներքին գործերի նախարարությունը, ի դեմս ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղար Տ. Ենոքյանի, որը գործում է ՀՀ ՆԳՆ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ս. Ազատյանի (այսուհետ՝ Վաճառող), հիմք ընդունելով 03.04.2026թ.-ին կնքված ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Հ-23-1 գնման Պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 8.5 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը /այսուհետև՝ Համաձայնագիր/ հետևյալի մասին.

**1. Համաձայնագրի առարկան, գինը, վճարման կարգը և գործողության ժամկետը**

1.1 Սույն Համաձայնագրով Կողմերը համաձայնության եկան և հաստատեցին ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Հ-23-1 ծածկագրով գնման պայմանագրի շրջանակներում տեխնիկական բնութագրով սահմանված ապրանքների մատակարարման ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով:
1.2 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:
2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, Ծառայության մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:
2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:
2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է (1) մեկ էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:
2.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ներքին գործերի նախարարությունը:

**3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**«ԳՆՈՐԴ»**

**ՀՀ ներքին գործերի նախարարություն**
**ք. Երևան, Նալբանդյան 130**
**ՀՀ Ֆինանսների նախարարության**
**գործառնական վարչություն**
**Հ/Հ 900011049286**
**ՀՎՀՀ 02882913**
**հեռ. 010 59-68-57**
**Էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am**

______________________________**Տ. Ենոքյան**
**/ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղար/**
**(ստորագրություն)**

Ստորագրող
ՏԻԳՐԱՆ ԵՆՈՔՅԱՆ
3408840229

2026-07-03 15:28:25 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**«ՎԱՃԱՌՈՂ»**

**«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ**
**ՀՀ, Ք. Երևան, Զ. Սարկավագի 157**
**Բանկ Արարատբանկ ԲԲԸ**
**Հ/Հ 1510023294810100**
**ՀՎՀՀ 00803554**
**Հեռ: հեռ. 011 28-61-90**
**Էլ. Փոստ: kkfactory@rambler.ru**

Digitally signed by AZATYAN SUREN 2402700224
Date: 2026.07.02 11:44:32 AMT
_________________________ **Ս. Ազատյան**
**(ստորագրություն)**
**Կ.Տ**